ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Ո Ր Ո Շ Ու Մ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4236-Ա « 16 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի Հ.4398-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 29.07.2025 թվականի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված 20.12.2023 թվականի հ.ՍՏ-20122023-01-0531 գրությունը և քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 15-ի «Դավթաշենի 10-րդ փողոցի հ.2/3 բնակելի տան նկատմամբ Վլադիմիր Գրիգորի Հակոբյանի, Օֆիկ Գադոյի Առաքելյանի գույքային իրավունքները վերականգնելու, 252.4քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.4398-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով, հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024 թվականի հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ Դավթաշենի 10-րդ փողոցի հ.2/3 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման վերնագրում, նախաբանում, 2-րդ կետում՝ «252.4» թիվը փոխարինել «224.30» թվով.

3) Որոշման նախաբանում, 1-ին կետում՝ «552.4» թիվը փոխարինել «524.30» թվով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ